



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7500/9

ԳՐԱԲԱՆ «ԱՆԱՀԻՑ» . — ԹԻԻ 2



ԱԼԵԿՏԵՑ ՏԸ ՎԻՆԵԻ

ՔԵՐԹՈՒԱՆՆԵՐ

ԹՄՐԳՄԱՆՆՑ

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ

ԲԱՐԻՉ

ՏՊԱՐԱՆ «ԱՆԱՀԻՑ»

84

Վ-62

84-2
4-62



84-2

19 NOV 2010

20 APR 2006



ԱԼՖՐԵՏ ՏՐ ՎԻՆԵՆ

(1797—1863)

o—o



ԱԼՖՐԵՏ ՏՐ ՎԻՆԵՆ

1002
6014

Ալֆրետ տր վինենի, բանաստեղծ, թատրերգու և վրպասան, ամենէն մաքուր ու ազնիւ գէմքն է Ֆրանսայի ռոմանթիկ քերթութեան, թէպէտ շատ աւելի քիչ ծանօթ—մանաւանդ Հայոց մէջ—քան Հիւկօն, Լամարթինն ու Միւսէն: Վինենի շունի անշուշտ Հիւկոյի ձևական վիթխարի զօրութիւնն ու ներնչման տիեղերական ընդարձակութիւնը, ոչ ալ Լամարթինի մեծածաւալ ներդաշնակութիւնը եւ Միւսէի սրամիտ կրքոտութիւնը, բայց եր գործը՝ շատ անհաւասար ամբողջութեան մը մէջ՝ մէկ քանի էջեր ունի, որոնք ամենէն խորին եւ ամենէն անկեղծօրէն ու վեհօրէն ցաւազին շեշտերը կը պարունակեն զոր Ֆրանսական հողին արձակած ըլլայ այդ շրջանին, եւ որոնք վինենի կը բարձրացնեն դասին մէջ մարդկութեան այն սակաւթիւ մտածող-բանաստեղծներուն որ հողին ամենէն թաքուն ալքերն իջած եւ հոն հեծեծող ու քիչերուն լսելի ձայները նօթագրած են:

Այս դրբայլը, որ կը բովանդակէ վինենի դեղեցկադայն քերթութեան հայերէն թարգմանութիւնը, պէտք էր որ մասնաւորապէս գնահատուէր եւ սիրուէր մեր ժողովրդէն, որուն դարաւոր վիշտերով ծանրաբեռն սըրտին ոչինչ կրնայ հնչել աւելի քաղցր ու մտերիմ՝ քան այս երգը սեզ ցաւի եւ արի յուսահատութեան:

Ա. Զ.



ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Մ Ո Վ Ս Է Ս

- 0 0 -

Արեւը վրաններու ծայրերն ի վար կ'երկարէր ա՛յն շեղ ճառագայթները, ա՛յն մեծապայծառ բոցերը, ա՛յն ոսկի լա՛յն հետքերը զոր այցերին մէջ կը թողու երբ անապատին խորը աւազէ անկողնի մը ձօցը կը պառկի: Բացաւ վայրը կարծես ծիրանիով ու ոսկիով էր հագուած: Ամուլ Նարաւին դէպ ի գագաթը վերելքին մէջ, Մովսէս, Աստուծոյ մարգը, կանպէ կ'առնէ, եւ առանց հպարտութեան, անբաւ հորիզոնին վրայ երկայն ակնարկ մը կը պտտացընէ: Նախ կը տեսնէ Բազկաթը, գոր թզենիներ կը շրջապատեն, յետոյ, լեռներէն անդին որոնց վրայ իր աչքը կը յածի, կը տարածուի ամբողջ Գաղաազը, Եփրեմը, Մանասէն, որուն յուռթի երկիրն իր աջ կողմը կ'իջնայ. դէպ ի հարաւ, Յուզան, մեծ ու ամուլ, կը փռէ իր աւազներն ուր արեւմտեան ծովը կը քնանայ. աւելի հեռուն, հովտի մը մէջ գոր իրիկունը տեղունեցուցած է, Նեփթաղիմը կ'երեւայ՝ ձիթինիներով պսակուած. շքեղ ու հանդարտ ծաղիկներով դաշտերուն մէջ, Երիքովը կը նշմարուի, արմաւենիներու քաղաքը. եւ Փոզովրի տափերէն սկսեալ իր անտառներն երկարելով, թաւ հերձին կը տարածուի մինչեւ Սեգովը: Կը տեսնէ՛: Հրէաներուն վրայ իր մեծ ձեռքը կը տարածէ. յետոյ ճամբան կը շարունակէ դէպ ի լերան կաաարը:

Արդ, Մովսէսի գաշտերուն ընդարձակ շերջափակը ծածկելով, սուրբ լերան լա՛յն ստո-

41698 - 68

րոտը խոնամ, Իսրայէլի զաւակները ծործորին մէջ կը տատանէին, ինչպէս թանձր հասկերը ցոր հիւսիսանողմը կը տարուբերէ: Այն պահէն ի վեր ուր ցողն աւաղներու ոսկին կը թրջէ եւ գըլքներուն կատարն իր մարգրիտը կ'օրօրէ, հարիւրամիայ մարգարէ՝ պատկառանքով պաշարուած, Մովսէս մեկնած էր՝ Տիրոջը դէմը ելլելու: Վարէն աչքով անոր կը հետեւէին՝ գլխուն բոցերէն զինքը դուշակելով. եւ երբ մեծ լերանը բարձունքը հասաւ, երբ անոր ճակատը ճեղքեց Աստուծոյ ամպը, որ վեհաւայրին կատարը փայլակներով կը պսակէր, խունկ վառեցին ամէն կողմ՝ քարէ խորաններու վրայ, եւ վեց հարիւր հազար Ներայեցի, երեսնին հողին, արեւէն ոսկեղծուած կնդքուկի ծուխին մէջ, մէկ ձայնով երգեցին սրբազան օրհներգը: Եւ Ղեւտացիները, ամբօխին վերեւ կանգնելով՝ ինչպէս նոճեստան մը թաւալուն աւազին վրայ, ժողովրդին ձայնին տաւիղով ընկերանալով, դէպ ի երկինքը կ'առաջնորդէին Արքայից արքային երգը:

Եւ Աստուծոյ դիմացը կայնած, մութ ամպին մէջէն Մովսէս անոր կը խօսէր երես երեսի. «Ե՛րբ պիտի գայ վախճանս, կ'ըսէր Տիրոջը, ո՛ւր կ'ուզես տակաւին որ տանիմ քայլերս: Միշտ ուրեմն հզօր ու մենու՛ր պիտի ապրիմ: Թոյլ տուր որ հողին քունը քնանամ: Ի՞նչ բրբ քեզի որ զիս ընտրեալդ կարգեցիր: Ժողովուրդդ առաջնորդեցի հոն ուր ուզեցիր: Ահա անոր ոտքը Աւետեաց երկրին կը դպչի: Քու եւ անոր միջեւ թող այլեւս ուրիշ մը ըլլայ միջնորդ, թող ան սանձահարէ Իսրայէլի երիվարը. անոր կը թողում մատանս ու արօյրէ գաւաղանը:

«Ինչո՞ւ պէտք զգացիր յոյսերս ցամքեցնել, ինչո՞ւ չթողուցիր որ մարդ մնայի՝ սգիւտութիւններու հետ, քանի որ Քորեբ լեռնէն մինչեւ Նաբաւ լեռը, գերեզմանիս տեղը չկրցայ գտնել: Աւա՛ղ, զիս իմաստուններուն իմաստունն ըրիր. իմ մասս ճամբան ցոյց տուաւ թափառական ժողովրդին. թագաւորներուն զլխուն վրայ կրակ տեղացուցի. ապա գան ծնրադիր իմ օրէնքներս պիտի պաշտէ. մարդոց շիրիմներուն է՛ն հինք կը բանամ. մահն իմ ձայնիս մէջ մարգարէական ձայն մը կը գտնէ. շա՛տ մեծ եմ ես. ոտքերս ազգերու վրայէն կը քալեն. ձեռքս սերունդներ կը շինէ ու կը ջնջէ. Տէ՛ր, աւա՛ղ, ես հզօր եմ ու մե՛նաւոր. թոյլ տուր որ հողին քունը քնանամ:

«Աւա՛ղ, երկնքին ալ բոլոր գաղանիքները գիտեմ, եւ քու աչքիդ զօրութիւնն ինձի փոխ տուիր դուն. կը հրամայեմ գեշերին որ իր քողերը պատռէ. բերանս աստղերն իրենց անունովն համրեց, եւ ձեռքիս շարժումին վրայ, անոնց ամէն մէկը փութաց «հոս եմ» ըսաւ: Երկու ձեռքս ամպերուն ճակախն կը դնեմ, անոնց ձոցին մէջ մրբիկներու աղբիւրը ցամքեցնելու համար. քաղաքները կը թաղեմ հողմայոյդ աւաղներուն ներքեւ. լեռները կը տապալեմ քամիներուն թեւին տակ. իմ անխոնջ ոտքս միջոցէն աւելի ուժով է. յորդաջուր գետը մէկդի կը քաշուի երբ ես կ'անցնիմ, եւ երբ ես խօսիմ՝ ծովուն ձայնը կը լսէ: Երբ իմ ժողովուրդս տասապի կամ երբ օրէնքներու պէտք ունենայ, աչքս վեր կը դարձնեմ, քու ոգիդ զիս կը թափանցէ, երկիրն այն ատեն կը սասանի եւ արեւը կը վարանի: Հրեշտակները կը նախանձին ինձի եւ մէջերնին իմ վրաս կը սքանչանան: Եւ սակայն, ո՛վ Տէր, երջանիկ չեմ

ես զիս ծերացուցիր հզօր ու մենաւոր. թո՛ղ տուր որ հողին քունը քնանամ :

«Այն վայրկեանէն իսկ ուր հովիւը քու շունչովդ լեցուեցաւ, մարդիկ իրարու ըսին՝ «Ասօտարէ մեզի» . եւ իրենց աչքերը կը խոնարհէին բոցեղէն աչքերուս առջեւ, որովհետեւ անուանոց մէջ հողիէն աւելին կը տեսնէին : Սիրոյ մարիլը տեսայ եւ բարեկամութեան ցամքիւր . կոյսերը երեսնին կը սքողէին եւ մեռնելէ կը վախնային : Այն ատեն՝ սրբազան սիւնին մէջ փաթթուելով, ամենուն առջեւէն քալեցի՝ տխուր ու մենաւորիկ իմ փառքիս մէջ, եւ սրտիս խորէն ըսի՝ Ա՛լ ի՞նչ ցանկամ հիմա . լանջքի մը վրայ քնանալու համար ճակատս շատ ծանր է . ձեռքս սարսափ կը ձգէ այն ձեռքին որուն կը դպչի . ձայնիս մէջ մրրիկ, բերնիս վրայ փայլակ կայ . հետու գլխս սիրելէ, ահա ամենքը կը դողան . եւ երբ թեւերս բանամ, ծունկի կ'իջնան առջեւս : Ո՛վ Տէր, ես հզօր ու մենաւոր ապրեցայ . թո՛ղ տուր որ հողին քունը քնանամ : »

Արդ, ժողովուրդը կը սպասէր, եւ ցասումէն վախնալով, կ'աղօթէր առանց նախանձոտ Աստուծոյն լերանը նայելու, որովհետեւ եթէ աչքը վերցընէր, ամպին սեւ կողերը կ'որոտային, մրրիկին շանթերը կը բազմապատուէին, եւ փայլակներուն կրակը, բիրերը կուրցնելով, ամէն կողմ գետնամած ճակատները կ'անդաւալուծէր : Քիչ յետոյ, լերան կատարը երեւան ելաւ, ու Մովսէս ա՛լ հոն չէր : Լացին անոր վրայ : — Դէպ ի Աւետեաց երկերը զիմելով, Յետո կը յառաջանար՝ մտախոհ եւ գուհատ, որովհետեւ Ամենակալին ընտրեալն էր արդէն :



Ա. Գ. Է. Տ. Ք. Ը

- 0 0 -

Տժգոյն քաղաքներուն մէջէն, ամբարիշտ Անձնասպանութիւնը՝ ետեւէն, Աղէտքը կը յածի ու մեզ կը լրտեսէ մեր ահաբեկ սեմերուն մօտը, ան իր որսը կը պահանջէ . երիտասարդը, հերձուանքին ծոցէն, կը լսէ անոր ձայնը, կը հառաչէ ու կը թոռմի . ինչպէս տերեւը որ կը թափի աչնան, ձերունին զերեզման կ'իջնէ, զինքը սնուցանող կրակէն զրկուած :

Ո՞ւր փախչիլ : Դրանս սեմին վրայ, Աղէտքը օր մը եկուս նստաւ . եւ այդ օրէն ի վեր, միտադնած օրերուս մէջէն զայն հետո ունիմ միշտ : Արեւուն տակ ու մութին մէջ, անոր մահաշուք թեւերը զիս սեւ վերարկուի մը պէս կը պատեն : Անոր բազուկներն, իմ ցաւերուս ծարաւատենչ, կը փաթթուին ինծի, եւ կապարագոյն ձեռքերը դանակը սրտիս վրայ կը բռնեն :

Կեանքս հաճոյքի տուի, ու հիշտութեանց ժպտեցայ . յիմարները, մեղսակիցներս, երջանկութեանս վրայ կը զմայլին . ես իսկ, ուրախութեանս գիւրահաւան, սիրտս կը բանամ, ծիծաղկոտ հպարտութեան մը հեղեղին մէջ կ'ընկղմիմ . բայց Աղէտքը կ'անցնի զէմքիս առջեւէն, ծիծաղը կը ջնջուի եւ ճակատս իր սուգը կը հազնի նորէն :

Իզուր խրախճանքներու մէջ նորէն կը փնտռեմ իրենց պառջին շլացումները, սրտիս թոյլ պարտութիւններն ու տարտամ հմայքները . ուրուականը պարին կը խառնուի, նուազնեւրուն մէջ վար իջնալով՝ արցունքներովը գետինը կ'արատէ, եւ աչքերուս ակնկալութիւնը

պատրելով, ծաղկազարդ ճակատներուն մէջ-
տեղէն իր զազիր գլուխը կը ցցէ :

Լուսեթեան մէջ ան կը խօսի ինծի, եւ
գիշերներս անոր ձայնը կը լսեն. ծառերուն մէջ
ան կ'օրօրուի՝ երբ անտառներու խաղաղու-
թիւնը երթամ խնդրել. ականջիս միշտ կը հա-
ռաչէ. կարծես թէ մարդ մըն է որ հողին կը փչէ.
սիրտս կը կծկուի սարսափահար. աչքերս ղէպ ի
սասչերը կը բարձրանան, լայց հոն հինաւուրց
ճակատագրին սուրը կախուած կը տեսնեն :

Գլուխս, ձեռքերուս վրայ հակած, կը կարծէ
անմեղ քունը գտնել : Բայց, աւա՛ղ, անոր
կարմրաբաժա՛կ ծաղիկն ինծի ծածուկ կը մնայ.
կեանքի քաղցր բացակայութիւնն ինձմէ
խլուած է առ յաւէտ. այդ լողանքը որ մեր օ-
րերը կը զովացնէ, ցաւագնած հողիին այդ
մահը, զոր ամէն գիշեր ամէն մարդ կը վայելէ,
քո՛ւնը, ինձմէ մշտապէս խոյս է տուած :

«Ա՛խ, քանի որ յաւիտենական տքնու-
թիւն մը մշտաբաց աչքերս կ'այրէ, եկո՛ւր,
ո՛վ Փառք, ըսի, մութ կեանքս արթնցուր տա-
ղերու ձայնով : Տո՛ւր գոնէ որ իմ կորստական
ոտքս աւազին վրայ հետք մը ձգէ » Փառքն ինծի
ըսաւ. « Տաւի զաւա՛կ, գիտե՞ս ուր կ'ուզես որ
քեզ առաջնորդեմ. դողա. եթէ քեզ անմահացնեմ,
Աղէ՛թքն է որ անմահացուցած պիտի ըլլամ » :

Աղէ՛թք, ա՛խ, ո՛ր բարեպատէ՛ս օրը քու
կատաղութիւնդ պիտի յաղթահարէ, ո՛ր հօր
ու օգնական ձեռքը քեզ իմ սրտէս պիտի կա-
ռենայ փրցնել, եւ այս հրավատ գեհնին մէջ՝
ինծի համար՝ ազնիւ անխոհեմութեամբ մը
չվարանելով միւրճիլ, պիտի յանդգնի բոցին
մէջ փնտռել հողիս, զայն բռնել ուժգնաբար եւ
վտանգէն հեռու առնել տանիլ :

Ճ Ա. Կ Ա. Տ Ա. Գ Ի Բ Ն Ե Ր Ը

- 0 0 -

Արարչութեան առաջին օրէն ի վեր, իւ-
ր սքանչելի ճակատագրի ծանր ու հօր օտքե-
րը ամէն մէկ գլխու եւ ամէն մէկ գործի վրայ
կը ճնշէին :

Ամէն ճակատ կը կորանար եւ իր օրը կը
գծէր, ինչպէս եղի մը ճակատը խորունկ ակօս
մը կը փորէ, առանց անդին անցնելու այն քա-
րէն ուր իր գիծը կը սահմանաւորուի :

Այդ պաղ աստուածութիւնները կապարէ
լուծը կը կապէին գանկին ու աչքերուն վրայ
մարդոց, որ անոնց ձեռքն ստրուկ, կը թափա-
ռէին, անաստղ, անծայր անապատի մը մէջ :

Տաժանագին շարժելով իրենց շղթայակիր
ոտքերը, անխուսափելի շրջանակին մէջ հե-
տեւելով արոյրէ մատին, անողոք ու խիստ
կամքերուն մատին :

Տխուր աստուածութիւններ արեւելեան
աշխարհին, ճերմակ քօղով կիներ, աներեր ար-
ձաններ, անոնք մեզ կը ճգմէին իրենց վիթ-
խարի ծանրութեանը տակ :

Ինչպէս տարմ մը անդգերու՝ հողին վրայ
թափած, յաւիտենական կարգի մը մէջ, միշտ
հաւասար թուով՝ երկրիս վրայ՝ մահկանացու-
ներու գլխուն իջած :

Իրենց եզունդներն անողորմաբար խելա-
ցնոր ցեղերու քստմնած մագերուն վրայ զրած
էին, քաշկրտելով կիներ որ կուլար եւ մարդը
որ իր հպարտութեանը մէջ ինքզինքը խոցուած
կը զգար :

Իրիկուն մը, պատահեցաւ որ հինաւուրց մոլորակն իր փոշին թօթուեց: Մեծ աղաղակ մը թնդաց. «Փրկիչը եկաւ, ահա՛ զեռասիւ ըմբիշը:

«Ճակատն արիւնոտ է եւ կողը ճմլած • բայց ճակատագիրը կը մեռնի Մարգարէին ոտքին տակ • Նաչը կը բարձրանայ եւ կը տարածուի մեր վրայ՝ պատսպարանի մը պէս:»

Այն ժամէն առաջ ուր, ատենով, այս բաները պատահեցան, ամէն մարդ կորաքամակ էր, ճակատը գունատ ու խամրած • երբ այս աղաղակն արձակուեցաւ, ամենքը ոտքի ելան:

Բաղդին կապարէ լուծին ծանր հանդոյցները քակելով, բոլոր ազգերը միաձայն գոչեցին. «Ո՛վ Տէր, ճշմարի՛տ է, ճակատագիրը մեռա՛ւ ուրեմն:»

Եւ տեսան ճակատագրին աղջիկները որ երամ երամ երկինքն ի վեր կը թռչէին, տաժանօրէն բանալով իրենց եղունդները որ մեր ցաւազին ցեղերը կը ճմլէին.

Մեծածալ պատմութեաններնուն տակ սքողելով իրենց արոյրէ ոտքերը, իրենց անազորոյն ձեռքն ու անողոք ղէմքը, բարձրանալով դանդաղօրէն՝ խուռնամբոխ երամով,

Աննչմարելի թռիչով մը, անթեւ, անզգալի, ինչպէս իրիկուան, հեռաւոր հորիզոնին կողմը, մերկալից ամպի մը խաղաղ վերելքը կը տեսնուի.

— Երջանկութեան հառաչ մը ելաւ մարդոց սրտէն • երկիրը սարսռաց իր անհուն ոլորտին մէջ, ինչպէս կը սրախայ ձի մը սանձէն ազատած:

Բոլոր աստղերը, յուզուած, լուռ ու մունջ մնացին, սպասելով՝ Մարդուն հետ, միեւնոյն ապշութեամբ, Ամենակարողին գերագոյն վճիռը,

Երբ երկնքի այդ աղջիկները, Տիրոջ մօտ դառնալով, կարծես իրենց ծննդավայր բնագաւառը գտած, Նեովայի շուրջը դաս կազմած շարուեցան,

Համանման շարժումով մը իրենց անվրէպ ձեռքերը վերցնելով, յետոյ իրենց ցաւի երգը երգելով միաձայն, եւ ամենը մէկանց իրենց հանդարտ տեգոյն ճակատը խոնարհելով.

«Կուգանք Ապագային Օրէնքը ուզելու • մենք, ո՛վ Տէր, պաղ ճակատագիրներն ենք, որոնց հինաւուրց զօրութիւնը անկու՛մ պէտք չէր որ ունենար •

«Մեր մատներուն տակ կը թաւալէինք օրերն ու տարիները • պիտի ապրի՞նք այսուհետեւ կամ թէ հասած է մեր վախճանը, մենք՝ երկնքի զօրութիւններուն անգրանիկները •

«Մէկ հարուածով կը ջանգես Բաղդին մեծ որոգայթը որուն մէջ կարգով կ'իջնային թարսափահար ազգերը: Պէտք է ուրեմն փոսը գոցել եւ զսպանակը կտորե՞լ:

«Ա՛լ պիտի չվարե՞նք այդ տկար ու տրտում հօտը, սա մէկ բոպէի մարդիկը՝ մահուան դատապարտուած, մինչեւ ծայրը ճամբուն որուն սանձանաքարը մենք կը զետեղէինք:

«Մենք կը փորէինք կեանքին կաղապարը: Բոլոր կիրքերը հոն իրենց լավան կը թափէին եւ ղէպքերը կուգային բոլորն ալ հոն կը հալէին:

«Արոյրէ տախտակներուն վրայ ուր մեր օրէնքը գրուած է, ՃԱԿԱՏԱԳՐԻՆ անունը կը ջնջես, մեր ստրուկին՝ մարդուն՝ ոտքերէն կապանքը կը քակես:

«Ո՛վ պիտի կրէ բեռը՝ որմէ զարհուրեցան բոլոր ստեղծուածները, մտածման այդ

բեռ , որուն անունն է՝ վարը՝ ՊԱՏԱՍԽԱՆՆ՝
ՏԻՈՒԹԻՒՆ ։

* * *

Պահ մը լուռ թիւն տիրեց , եւ երկերը սքրած
կանոց առաւ ինչպէս նաւակը , առանց թիաւա-
րի , մորկայոց կոհակներուն վրայ , գիշերին
մէջ ալեծուփ ։

Չայն մը իջաւ՝ այն բարձունքներէն ուր
աշխարհներն անվախճանօրէն կը ծնին միջո-
ցին մէջ , այդ ձայնը երկրին ալքերը լեցուց ։

«Իարձէք հոն իմ անունովս , ո՛վ թագու-
հիներ . ես Շնորհն եմ : Մարդը միշտ անստոյգ
լողոր մը պիտի մնայ՝ ջուրերուն մէջ ժա-
մանակին որ ինքզինքը կը չափէ եւ կ'անցնի ։

«Անոր ձակաին դպցուցէք մատերնիդ , ո՛վ
ազլիկներ ճակատագրին . անոր բաղուկը ջուրը
պիտի ձեղքէ՝ բարձր ըլլայ կամ ցած , ուղե-
լով իրտեղը գտնել եւ իր վախճանը գուշակել ։

«Աւելի երջանիկ պիտի ըլլայ , ինքզինքը
տէր եւ ազատ կարծելով , այդ ժանտ պայքարին
մէջ , ուր ես միայն՝ վերէն՝ հաւասարակշռու-
թիւնը պիտի պահեմ ։

«Ինձմէ պիտի բղխի անոր շունչն եւ ուժը
մշտապէս : Անոր արժանիքը իմն է , անոր յա-
ւերժական օրէնքը՝ ընել ինչ որ ես կ'ուզեմ
հասնելու համար ՈՒՐ ՈՐ ԵՍ ԳԻՏԵՄ : »

* * *

Եւ խումբը իջաւ դէպի իր որսն յաւի-
տնական , իր տիրապետութիւնը վերստին
ձեռք առնելու համար՝ երկչոտ , անկատար եւ
սպստամբ մարդկութեան վրայ ։

Դայը լսուեցաւ մութ լեզէոնին եւ անու-
ղոք կիներուն ոտքի բաղխումը , ինչպէս դա-

դառ մը կապարէ որ նկուզի մը մէջ կ'իյնայ ։
Անձնուրը մարդ մը բանեց իր անտես ձեռ-
քերուն մէջ . բայց այս մտայլ մենամարտին
մէջ այժմ աւելի հզօր , մեր աշուտ հողին կը
պայքարի այդ անկարեկիր Ոգիներուն հետ ։

Երբեմն մէկդի կ'ընենք անոնց նենդ ու
անդուժ մատը : Կամքը՝ երկնքի ճաճանչով մը
լուսաւորուած մեր ձակատը վսեմ բարձունք-
ներու վրայ կը հանէ ։

Սակայն մեր հրուանդաններուն , մեր ժայ-
ռերուն , մեր սարերուն վրայ անոնց դժեհայ ու
անխուսափելի մատը մեր առջեւ կը ցցուի եւ
մէկ նայուածքով մեզ սեւ անդունդներու խորը
կը գլորէ ։

Օ՛հ , ի՛նչ յուսահատութեան մէջ դեռ կը
դտնուինք ամենքս : Լայնցուցիր անուրը որ
մեզ կը կաշկանդէ , բայց ո՛վ կը բռնէ շղթան ։
— Դունն արդեօք , արդա՛ր Աստուած ։

Ազատ ու խրոխտ դատաւոր իր կեանքին
արարքներուն , եթէ մեր սիրտը բացուի առա-
քինութեանց բուրումին , եթէ սիրով բոցավա-
ռի , եթէ մինչեւ հանճարը բարձրանայ ։

Թող ձակատագրին ստուերն , ո՛վ Տէր ,
մեր դեղեցիկ աւելններուն անյեղլի խոչընդոտ
մը , մեր անվերջ ճիգերուն անակնկալ հարու-
ածներ չընդգիմաբերէ այլեւս ։

Ո՛վ աղբիւր սարսափի՛ է՛ն քաջը վրդո-
վելու կարող , անպատասխան խնդիր որուն
առջեւ սուրբերդ խկ լուռ մնացին , ո՛վ խոր-
հուրդ , ո՛վ տանջանք ուժով ու խոհուն հողիին ։

Մեր յաւիտենական բառը ուրեմն՝ ԳՐՈՒՄ
Է՞ՐՆ է : ՄԱՏՈՒԾՈՅ ՄԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ , կ'ըսէ
ստրուկ Արեւելքը . եւ Արեւմուտքը կը պա-
տասխանէ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ ։



ՀՈՎԻԻՒՆ ՏՈՒՆԸ

ԱՌ ԵՒԱ.

— 0 0 —

Ա.

Եթէ սիրտդ՝ կեանքին բեռին տակ հեծելով՝ վերաւոր արծիւի մը պէս կը քաշկրտուի եւ կ'ազօրի, իր գերուած թեւին վրայ կրելով՝ ինչպէս իմա՝ ճակատագրական, ջախջախիչ ու սառուցիկ աշխարհ մը ամբողջ. եթէ ամէն մէկ արտփին՝ իր անմահ վէրքէն արիւն կը ժայթքէ, եթէ իրեն այլեւս այնպէս չի թուիր թէ սէրը, իր հաւատարիմ աստղը, միայն իրեն համար կը լուսաւորէ աղօտ հորիզոնը .

Եթէ քու հոգիդ՝ շղթայակապ, ինչպէս իմ հոգիս, խոնջ իր սաքին կապուած գունատէն ու իր լեզի հացէն, իր սգաւոր թիարանին վրայ թիակը ձեռքէն կը ձգէ, գունատ գլուխը կը ծռէ՝ ծովուն վրայ կուլայ, եւ անոր ջուրերուն մէջ անծանօթ ճամբայ մը փնտռելով, հոն կը տեսնէ սարսաղին՝ իր մերկ ուսին վրայ՝ ընկերութեան դրած բառը երկաթով գրոշմուած .

Եթէ մարմինդ, գազանի կիրքերով դողդոջուն, նայուածքներէն կը դայրանայ՝ բարախուն ու երկչոտ. եթէ իր զեղեցկութեանը համար խորունկ թաքստոցներ կը փնտռէ, որպէս զի գայն բոլորովին զերծ պահէ օտար աչքերու թշնամանքէն, եթէ շրթունքդ ստու թեան թոյնէն կը չորնայ, եթէ աղւոր ճակատդ կը կարմրի քեզ տեսնող ու լսող պիղծ անծանօթի մը երազներուն մէջէն անցնելուդ մտածումովը .

Չգէ գնա՛ արիարար, հեռացի՛ր բոլոր քաղաքներէն, ա՛յ ոտքերդ մի՛ աղտոտեր ճամբուն

1001

89-86914

փոշիին մէջ, մեր մտածմանց կատարէն մեր աւնարգ ոստանները գիտէ՝ ինչպէս մարդկային ստրկութեան ճակատագրական ժայռերը: Մեր անտաններն ու դաշտերը լայն ապաստաններ են, ազատ՝ ինչպէս ծովը մութ կղզիներուն շուրջը: Քալէ՛ գաշտերուն մէջէն, ձեռքդ ծաղիկ մը բռնած:

Բնութիւնը քեզի կը սպասէ՝ ծանրախիստ լուսութեան մը մէջ. խոտերը ոտքիդ տակ իրենց իրիկուան ամպը կը բարձրացնեն. եւ հրաժեշտի հառաչը զոր արեւը երկրիս կ'ուղղէ, գեղեցիկ շուշանները բուրվառներու պէս կ'օրօրէ: Անտան իր խորին սիւներն սքողեց. լեռը կը պահուրտի, եւ տփգոյն ջուրերուն վրայ՝ ուռեւնին իր անբիծ թափորխօրանը կը կախէ:

Բարեկամ վերջալոյսը հովտին մէջ կը քնանայ, զմրուճատէ խոտերուն ու ոսկի գալարիքին վրայ, մենաւոր աղբիւրին երկչոտ կնիւններուն եւ հորիզոնին վրայ գողացող երազուն անտառին տակ, խոյս տալով կ'օրօրուի վայրի ողիւթյաներուն մէջ, իր գորշ վերարկուն ծովափունքներուն վրայ կը նետէ, եւ գիշերուան ծաղիկներուն բանտը կը բանայ:

Իմ լերանս վրայ թանձր ցախաստան մը կայ, ուր որսորդին ստքձրը դժուարաւ կը մըխտուի, որ մեր ճակատներէն աւելի բարձր կը կանգնէ իր սէգ գլուխը, եւ գիշերը՝ կը պանպանէ հօտաղն ու օտարականը: Եկուր հոտ սէրը ծածկէ եւ քու աստուածային յանցանքդ. եթէ խոտերը հողմածուփ են կամ բարձր չեն բաւական, քեզի համար պիտի թաւալեմ հոն բերեմ Հովիւին Տունը:

Ան յուշիկ կը քալէ իր չորս անիւններուն վրայ. անոր տանիքը քու ճակատիդ ու



աչքէդ աւելի բարձր չէ • բուստին գոյնն ու
 աչքերուդ գոյնը կը ներկեն այդ գիշերային
 սայլն եւ անոր անձայն սոնակները : Անոր սեմը
 ինկարոյր է , անկողնարանը լայն ու մութ •
 եւ հոն , ծաղիկներուն մէջ , պիտի գտնենք խա-
 ւարին ծոցը՝ լուիկ մահիճ մը մեր խառնուած
 մագերուն համար :

Եթէ ուղեւ , կ'երթանք տեսնել ձիւնին եր-
 կիրները , կամ այն երկիրներն ուր տարփատենչ
 աստղը կը շողշողայ եւ կ'այրէ , կամ անոնք
 զոր հովերը կը կոծեն , անոնք զոր ձիւնը կը
 պաշարէ , անոնք ուր մութ բեւեռն իր սասոյ-
 ցին տակ կը մնայ անիծուած : Դիպուածին
 թափառկոտ դնացքին կը հետեւինք : Ի՛նչ հոգս
 է արեւուն լոյսը , ի՛նչ հոգս՝ աշխարհը • աղւոր
 են՝ պիտի ըսեմ , եթէ քու աչքերդ այդպէս ըսեն :

Թող Աստուած ժամանատեղն հասցնէ շանթ-
 արձակ շոգեկառքը՝ լեռները կտրող անցնող
 երկաթէ ճամբաներուն վրայէն • Թող հրեշտակ
 մը կանգուն կենայ անոր մեծաշնչից դարբնո-
 ցին վերեւ՝ երբ հողին տակէն կ'անցնի ան կամ
 կամուրջները կը դողացնէ , եւ իր հրեղէն ա-
 տամներովն իր կաթսաները լափելով՝ ոստան-
 ները կը ձեղքէ եւ գետերուն վրայէն կը ցատ-
 քէ , աւելի արագ քան կրակոտ ոստռամներով
 եղջերուն :

Եւ եթէ կապտաչուի հրեշտակն անոր ճամ-
 բուն վրայ չհսկէ եւ՝ սուրը ձեռքը՝ չսաւառնի
 եւ զայն չպահպանէ , եթէ լծակին հարուածները
 չհամրէ եւ եթէ ականջ չդնէ անիւին իւրա-
 քանչիւր գարձուածքին՝ իր յաղթական ըն-
 թացքին մէջ , եթէ աչքը անբաժան չպահէ ջու-
 րերէն եւ ձեռքը կրակէն , տղու մը ձգած մէկ

գայլախաղը պիտի բաւէ՝ մոզական հնոցը
 շարդուփշուր պայթեցնելու համար :

Երկաթէ ցուլին վրայ որ կը մխայ , կը
 փչէ ու կը պոստչէ , մարդը շատ կանուխ հե-
 ծաւ : Դեռ ոչ ոք գիտէ թէ ի՛նչ մըրիկներ իր ծո-
 ցին մէջ կը կրէ այդ դժնեայ կոյրը • եւ զուարթ
 ուղեւորն իր գանձն անոր կը յանձնէ , իր ծեր
 հայրն ու իր սրդիները պատանդ կը նետէ
 կարճեղոնեան ցուլին հրավաւ փորին մէջ , որ
 զանոնք մոխիր դարձած զուրս կը թափէ ոս-
 կիի աստուածին ոտքը :

Բայց պէտք է յաղթել ժամանակին ու մի-
 ջոցին , պէտք է հասնիլ կամ մեռնիլ : Վաճա-
 ռականները նախանձոտ են : Անցնող շոգեկառ-
 քին ածուխներուն տակէն ոսկի կը թափի :
 Վայրկեանը եւ նպատակը , մեզի համար՝ տիե-
 ղե՛րքն է : «Երթա՛նք» , ըսին ամենքը • բայց ոչ
 ոք տէրը չէ մանչող վիշապին որուն գիտուն մը
 ծնունդ տուաւ • մենէ աւելի ուժովի մը հետ է
 որ խաղալու ելած ենք :

Է՛հ , թող ամէն բան երթեւեկէ եւ թող
 մեծ շարժառիթները գործողութիւններն ար-
 ձակեն հրեղէն թեւերու վրայ • կը բաւէ որ
 միշտ բաց ըլլան վեհանձն բաներուն , վաճառա-
 կանին ճամբաները՝ զգացումներուն ծառայու-
 թիւն պիտի մատուցանեն : Օրհնեալ ըլլայ Առ-
 եւտունն իր յանգուզն հերմեսացու պովը , եթէ
 Սէրը՝ զոր մութ մտածում մը կը շարչարէ՝ պիտի
 կարենայ մէկ օրուան մէջ երկու մեծ աղբերու
 մէջէն անցնիլ :

Սակայն , ի բաց առեալ երբ կեսնքը վտան-
 գի մէջ տեսնող բարեկամ մը յուսահատ աղա-
 զակով մը մեզ կանչէ , կամ երբ իր սրափողովը
 Ֆրանսան մեզ հրաւիրէ պատերազմի հանդէս •

ներուն , գիտութեան պայքարներուն , կամ երբ մահուան անկողնին մէջ արտասուած թոր մայր մը ուղէ անգամ մըն ալ իր տխուր ու քաղցր աչքերը սեւեռել իր սիրական զաւկներուն վրայ զոր այլեւս պիտի չտեսնէ ,

Խոյս տանք այդ ճամբաներէն : — Անոնց ուղեւորութիւնը զուրկ է շնորհէ , քանի որ՝ երկաթէ գծերուն վրայէն՝ ան այնչափ արագ կը կատարուի որչափ միջոցին մէջէն արձակուած սլաքը որ աղեղէն մինչեւ նպատակակէտը կը սլանայ օդը շչեցնելով : Այդպէս հետուն նեւ տուած , մարդ ամբողջ բնութեան մէջ ուրիշ բան չի չնչեր եւ չի տեսներ բայց եթէ խեղճ գուկ մտախուզ մը որուն մէջէն փայլակ մը կ'անցնի :

Ա՛լ երբեք չենք լսեր , արահետի մը վրայ , ճիւղ մը աշխոյժ ոտքը որ հրավառ սաւերը կը ծեծէ : Մ'նա՞ք բարով , յամբ ճամբորդութիւններ , հեռաւոր ձայներ որո՞նց ականջ կը զննք , անցորդին ծիծաղը , սոնակին յապաղումները , այլազան զառթիթափներու անակնկալ զարձուածքները , բարեկամի հանդիպում մը , մտոցուած ժամերը , ուշ ատեն վայրի տեղ մը հասնելու յոյսը :

Անջրպետն ու ժամանակը յաղթահարուած են : Գիտութիւնը երկրիս շուրջը տխուր եւ ուղիղ ճամբայ մը կը դծէ : Աշխարհս կը պզտիկնայ մեր փորձառութեամբը , եւ Հասարակածն այլեւս ուրիշ բան չէ բայց եթէ շատ նեղ օղակ մը : Ա՛լ գիպուած չկայ : Ամէն ոք իր գծին վրայէն պիտի սահի , անշարժ՝ այն միակ կարգին վրայ զոր մեկնումի պահն իրեն նշանակեց , լռիկ ու պարզ հաշիւի մը մէջ թաղուած :

Երբեք սիրատարփ ու խաղաղ Երազանքը պիտի չկարենայ առանց սոսկումի իր ճերմակ

ուքն ասոր կապուած տեսնել . որովհետեւ պէտք է որ անոր աչքերն ամէն տեսանելի առարկայի վրայ երկայն նայուածք մը հեղուն՝ հոսող գետի մը պէս , պէտք է որ ան ամէն բան հարցափորձէ մտատանջօրէն , եւ աստուածային դաղտնիքներն ինքնին ուսումնասիրելով՝ քալէ , կանգ առնէ ու նորէն քալէ՝ գլխիկոր :

Բ

Բանաստեղծութի՛ւն , ո՛վ գանձ , ո՛վ մարգրիտը մտքին . սրտին ալեկոծումներն ինչպէս ծովունները՝ չեն կրնար արգիլել որ քու բազմերանդ պատմութեանդ հաւաքէ այն գոյները որոնք քեզ պիտի կազմեն . բայց երբ առնական ճակտի մը վրայ քու շողալդ անսնէ , խորհրդաւոր ու տոգոյն նշոյլէդ խոոված , աամիկը՝ անաբեկ՝ հայհոյել կը սկսի :

Մաքուր խանդավառութիւնը վախ կ'ազդէ տկար հոգիներուն որոնք անկարող են տուկալ անոր կրակին ու ծանրութեանը : Ինչո՞ւ փախչիլ անկից : — Կեանքը կրկնապատիկ է բոցին մէջ . մերթ ուրիշ աստուածային ջանիւր են որ մեղ կ'այրեն , — Արեւը , Սէրը , Կեանքը . բայց ո՞վ երբեք փափաք ունեցած է զանոնք մարելու . երեքն ալ կը սիրենք , անիծելով հանգերձ զանոնք :

Մուսան ինքզինքն արժանի դարձուցլիբբ ժպիտներուն եւ հեզնական կասկածներուն զոր իր տեսքն հիմա կ'արթնցնէ : Այն վայրկեանէն իսկ երբ իր աչքը աստիճաններուն նայուածքը փնտռեց , իր խօսքերը զոգոց իրան , իր երգուած մը կասկածելի երեւցաւ , ա՛լ իրեն արգիլեցին իմաստութիւնն ուսուցանել : Ճամբուն անցորդներուն «Նուէր մը տուէք» կը գոչէր : Անցորդն անոր դրամ տուաւ՝ անվախ եւ անպատկառ :

Ա' խ, լկտի' աղջիկ, սուրբ Որփէին դո'ւստ-
րը, ինչո՞ւ չպահեցիր քու գեղեցիկ ծանրու-
թիւնդ : Հիմա պիտի չերթայիր այդպէս խեղ-
դուկ ձայնով քաղաքին պիղծ քառուղիներուն
վրայ երգելու : Իերնիդ անկիւնը պիտի չփակ-
ցնէիր պչրող մառբիկալը՝ բերնի մը չափ
գրգռել, եւ կապոյտ աչքիդ ծայրը անամօթ
երկդիմութիւնը պիտի չդնէիր :

Մանկութենէդ իսկ ինկար դուն . խօլ Յու-
նաստանին մէջ է որ ծերունի մը , իր նախան-
ձոտ համբոյրովը քեզ զինովցնելով, է'ն առաջ
վեր քաշեց քու քրմուհիի պատմութեանը , եւ
մանչերուն մէջաեղը , քեզ իր ծունկերուն վրայ
նստեցուց : Այդ խայթող համբոյրին հետքը
դեռ կը կրես . Ովրա տիտի խնջոյքներուն մէջ
լամեցով երգեցիր , ու Վոլթէր արքունիքին մէջ
քեզ մեր առջեւ քաշկրտեց :

Վեատեան կո'յս՝ մարած կրակով , ամենէն
ծանրախոհ մարդիկն իրենց ճակտին վրայ կէս
մը միայն կը դնեն քու թաղդ . քու կապանք-
ներուդ մէջէն քալելը՝ կանգ առնել կը համա-
րին . եւ միայն բանաստեղծ ըլլալը նախատինք
կը սեպեն : Իրենց մտածումները բեմին հովե-
րուն կը նետեն , եւ այդ հովերը , կոյր՝ ինչպէս
բաղդը , անոր պէս զանոնք պիտի թաւալեն ու
առնեն տանին :

Գոռոզ են ու սէգ՝ իրենց կեղծ կեցուածքին
մէջ , բայց հողը կը դողայ այդ բեմերուն ոտքը :
Իրենց վաղանցուկ ճառերը ճարտարօրէն կը շողո-
քորթեն ամբոխը որ կը խոնուի եւ կը ծափահա-
րէ . այդ նեղ կամարներուն տակ միշտ վերանո-
ւորողոզ այդ հանդիսականները քաղաքական
զերասաններուն ուրիշ բան չեն նետեր եթէ
ոչ անբոյր եւ յաճախ անվաղորդայն ծաղիկներ :

Ատոնք իբր հորիզոն իրենց ներկայաց-
ման սրահն ունին . խորհրդարանը , ուր այդ
ընտրեալներն իրենց կեղծ պայքարը կը մղեն ,
ի զուր իր տաճարին մէջ անստոյգ պատգամ
մը կ'արձակէ . ժողովուրդը հեռուէն ստոնց
վէճերուն ազմուկը կը լսէ , բայց այդ ժողով-
ներուն խաղը կը դիտէ այն աչքով որով իր
տղաքն ու վրդոված կիները հարիւրթեւեան
չոգեկառքի մը անեղ նախափորձը կը տեսնեն :

Կասկածոտ գեղջուկը կը մրմնայ , զինքն
ստիպուած տեսնելով արօրն ու հերկը ձգել՝
քուէարկութեան երթալու համար : Սակայն
մէկ օր տեւող ո եւ է փաստաբան մը իր սրտին
խորէն արհամարհանք կը զգայ անկորուստ
բանին համար : Ինքը որ հոգիին գոյութեանը
կը տարակուսի , իր խօսքերուն տեսականու-
թեանը կը հաւատայ . քու վեհ խորհրդանշան-
ներուդ վրայ կը ծիծաղի , ո'վ բանաստեղծու-
թիւն , ո'վ դուն՝ ճշմարիտ մտածողներուն ան-
ջնջելի տարփանքը :

Ի'նչպէս պիտի պահպանուէին խորին
մտածումները առանց իրենց կրակներն հաւա-
քելու քու ջինջ ազամանդիդ մէջ որ ա'յնքան
լաւ կը պահէ անոնց խտացած շքեղութիւն-
ները : Ամուր , շողուն ու կարծր այդ նուրբ
հայելին , մեռած ազգերու մնացորդ , մշտապե-
քար՝ զոր ոտքերնուս տակ կը գտնենք երբ
փոշիին մէջ հին քաղաքները կը փնտռենք՝ ա-
ռանց անոնցմէ պատ մ'իսկ գտնելու :

Անդուգակա'ն աղամանդ , թող քու բոցը
լուսաւորէ մարդկային բանականութեան յամր
ու յետամնաց քայլերը : Հեռուէն տեսնելու համար
ժողովուրդները որ կը քալեն , պէտք է որ հո-
վին իր տանը տանիքին վրայ քեզ ազուցանէ :

Դեռ Թիւրքազաձ չէ: Դեռ այն պահուն մէջն ենք երբ արշալոյսը կանխող առաջին ձերմակ ճառադայթը երկինքը կը զծէ հորիզոնին եզերքը:

Ժողովուրդները, դեռ սղայ, հագիւ իրար կը սկսին տեսնել՝ իրենց քնացած առնոր բուսած մացառներուն վերեւէն, եւ իրենց ձեռքը, փուշերուն մէջէն զոր մէկդի կ'ընեն՝ առաջին սպեղանին կը զնէ հարուածներուն: Դեռ բարբարոսութիւնը մեղ իր պատեանին մէջ կը պահէ: Հին առններուն մարմարը մեղ մինչեւ մէջքերնիս կը շղթայէ, եւ ոեւէ կորովի մարդ նման է Սահմանագիք աստուածին:

Բայց մեր արագ միտքը բազմաչարժ է. բանա՛նք անոր հըօր զսպանակներուն ամբողջ գինարանը: Անտեսանելին անդոյ չէ: Հողիներն իրենց աշխարհն ունին ուր անչօշափելի դանձեր կուտակուած կան: Իր երկու բազուկներուն մէջտեղը, Աստուած ամէն բան կը պարփակէ. անոր բանը բնակավայրն է մեր իմացականութեանց, ինչպէս՝ այստեղ՝ միջոցը բնակավայրն է մեր մարմիններուն:

Գ

Նւա, ո՞վ ես դուն: կը ճանչնա՞ս քու բնութիւնդ: Գիտե՞ս ի՛նչ է այս կեանքին մէջ քունպատակդ ու պարտականութիւնդ: Գիտե՞ս թէ որպէս զի պատժէր իր ստեղծած մարդը՝ զիտութեան ծառին ձեռք զպցուցած ըլլալուն համար, Աստուած թոյլ տուաւ որ ան ամէն բանէ առաջ ինք իրեն համար զգացած սէրն ամէն ժամանակի, ամէն տարիքի մէջ՝ իր զերագոյն բարիքն համարի, ինքզինքը սիրելէն չարչարուած, չարչարուած՝ ինքզինքը տեսնէ՞ն:

Բայց եթէ Աստուած անոր քով քե՛զ զնիւ ուզեց, ո՞վ կին, փափո՛ւկ ընկեր, Նւա՛, գիտե՞ս

թէ ինչո՛ւ. որպէս զի ան ինքզինքը դիտէ ուրիշ հողի մը հայելիին մէջ, որպէս զի լսէ այն երգը որ քենէ միայն կ'արձակուի, — մաքուր խանդավառութիւնը՝ անուշ ձայնի մը մէջ, որպէս զի դուն անոր դատաւորն ու դերին ըլլաս, եւ անոր կեանքին վրայ տիրես՝ անոր օրէնքին ներքեւ ապրելով հանդերձ:

Քու դուարթ խօսքդ բնաւորական բառերունի. աչքերդ այնքան հըօր են, տեսքդ այնքան ուժով է, որ Արեւելքի թագաւորներն իրենց երգերուն մէջ քու անաւոր նայուածքդ մահուան հաւասար սեպեցին, ամէն ոք կը ջանայ քու արագ դատումներդ ողորել... բայց սիրտդ որ աներկիւղ ձեւերդ կը հերքէ, անպայքար փեղի կուտայ բազդին անգթութիւններուն:

Քու միտքդ ոստումներ ունի, վիթերուն պէս, բայց անկարող է քալելու առանց առաջնորդի եւ առանց նեցուկի. հողն անոր ոտքերը կը ձմէ, անոր թեւերը կը յոգնեցնէ. աչքդ կը գոցուի լոյսին՝ այն վայրկեանէն իսկ որ լոյսը ծագի. երբեմն բարձր վայրերուն վրայ մէկ թափով թառած, հովերուն ձայնէն վրդոված, քու յեղիղուկ միտքդ չի կրնար միայնակ հըսկել հոն՝ անվախ եւ անտաղտուկ:

Բայց նաեւ դուն գերծ ես մեր վատ խոհեմութիւններէն. սիրտդ կը թրթոայ ու կը թնդայ՝ կեղեքուածներուն աղաղակէն, ինչպէս ծանրախիտ լուսութիւններով եկեղեցիի մը մէջ երգեհոնը հառաչ մը կը լսէ եւ կը հառաչէ խոտվայոյզ: Քու հրեղէն խօսքերդ անարգանք ու ապերախտութիւնները կը լուան. թեւէն կը բռնես՝ կը մղես մարդը... ոտքի կ'ելլէ՝ զինուած:

Քեզի՛ կը վայլէ լսել այն մեծ ողբերը զոր տրտում մարդկութիւնը խուլ ձայնով կ'ար-

ձակէ: Երբ սիրտը ուռած է սուրբ զայրոյթնւ-
րով, քաղաքներու օդը զայն կը խեղդէ՝ ամէն
մէկ տրոփին: Բայց հետեւէն՝ քաղաքային խոռ-
վութեանց հառաչները, ոստաններուն սեւ ա-
ծուխին վերեւ միանալով, մեծ բառ մը միայն
կը կազմեն որ յատակօրէն կը լսուի:

Եկո՛ւր: Երկինքն ինծի համար ա՛լ լու-
սապակ մըն է լոկ, որ քեզ կապոյտով կը պա-
շարէ, քեզ կը լուսաւորէ ու կը պաշտպանէ.
Լեռը քու տաճարդ է եւ անտառն անոր դմբէ-
թը. թռչունը հովին կ'օրօրուի, եւ ծաղիկը
կը բուրէ, եւ թռչունը կը հառաչէ, միմիայն
որպէսզի աւելի լաւ դիւթեն օդը զոր զուէն կը
ծծես. հրկիւրը կապերան է քու մանկական աղ-
ւոր ոտքերուդ:

Եւ ա՛, արարչութեան մէջ ամէն բան պիտի
սիրեմ. ամէն բան պիտի դիտեմ ջու երազուն
նայուածքիդ մէջ որ ամեն տեղ պիտի սփռէ
իր գունազեղ բոցերը, իր շնորհալի խաղա-
ղութիւնը, իր մոգական համը. իմ բղքաւած
սրտիս վրայ եկուր քու մաքուր ձեռքդ դիր.
Ղիս բնութեան հետ երբեք միեւակ մի թողուր,
որովհետեւ զայն ա՛յնքան կը ձանչնամ որ չեմ
կրնար իրմէ չվախնալ:

Ան ինծի կ'ըսէ՝ «Ես անկարեկիր թատե-
րաբեմն եմ, զոր իր գերասաններուն ոտքը չի
կրնար զղրղել. իմ զմբուխտէ սանդուղներս,
ալապատտրէ գաւթներս, մարմարէ սիւներս՝
աստուածներուն ձեռքովն են քանդակուած: Ո՛չ
ձեր աղաղակները կը լսեմ ո՛չ ձեր հառաչները.
հազիւ թէ վրայէս անցնիլը կը զղամ մարդկա-
յին կատակերգութեան, որ ի զուր կը փնտռէ
երկնքին մէջ իր անձայն հանդիսատեսները:

«Արհամարհանքով կը թաւալեմ, առանց
տեսնելու եւ առանց լսելու, ժողովուրդներն

ինչպէս մըջիւնները: անոնց աճիւնը չեմ
զանազաներ ասոնց սորէն. ազգերը կը կրեմ
առանց անուննին գիտնալու: Մայր կ'անուա-
նեն զիս եւ գերեզման մըն եմ: Իմ ձմեռս ձեր
մեռելները կ'ընդունի՝ իբրեւ իրեն ի պատիւ
մորթուած զոհեր, իմ գարունս ձեր պաշտում-
ները չ'զգար:

«Ձենէ առաջ, գեղեցիկ էի նորէն ու միշտ
խնկաւէտ. ամբողջ մաղերս հովուն արձակած,
երկնքին մէջ իմ սովորական ճամբաս կ'ընթա-
նայի, աստուածային ճօճանակներուն ներ-
դաշնակ առանցքին վրայ: Ձենէ ետքն ալ,
կտրելով միջոցն ուր ամէն բան կը սուբայ,
պիտի երթամ միայնակ ու խաղաղ, անարատ
լուսթեան մը մէջ՝ օդը պիտի ճեղքեմ ճակտովս
ու սէգ ծիծերովս:»


Ահա ինչ որ ըսաւ ինծի անոր օխուր ու
խորտոս ձայնը. եւ ա՛լ սրտիս խորէն գինքը կ'ա-
տե՛մ, եւ մեր արիւնը կը տեսնեմ իր ջուրին
մէջ եւ իր խտին տակ մեր մեռելները, որոնք
իրենց հիւթովը ծառերուն արմատը կը սնու-
ցանեն: Եւ կ'ըսեմ իմ աչքերուս որ զայն հմա-
յիչ կը գտնէին. «Այլ ո՛ւր տարէք ձեր բոլոր
նայուածքները, այլ ո՛ւր՝ ձեր բոլոր արցունք-
ները. սիրեցէք ինչ որ երկու անգամ պիտի
չտեսնուի երբեք:»

Օ՛հ, ո՛վ անգամ մըն ալ պիտի տեսնէ քու
շնորհդ ու գորովդ, քաղցր ու ողբական հրեշ-
տակ, որ հառաչելով կը խօսիս: Ո՛վ պիտի ծնի
քեզի նման, դգուանք մը կրելով մարմրող աչ-
քէդ ինկած ամէն մէկ փայլակին մէջ, հակած
գլխուդ օրօրումներուն, ցաւապին ու թուլօրէն
ընկզմանած հասակիդ եւ սիրատարի ու տա-
ռապող մաքուր ժպիտիդ մէջ:

Ապրէ՛ , ցուրտ ընութիւն , եւ միշտ վեր-
ապրէ՛ մեր ոտքերուն տակ , մեր ճակատներուն
վերեւ , քանի որ այդ է քու օրէնքդ : ապրէ՛ ,
եւ քանի որ դիցունէի ես , արհամարհէ՛ մարդը ,
խոնարհ ճամբորդ , որ պէտք էր արքադ ըլլար :
քու բոլոր թագաւորութենէդ եւ իր ունայն
չքեղութենէն աւելի՛ մարդկային տառապան-
քին վեհափառութիւնը կը սիրեմ . ինձմէ սիրոյ
ճիշ մը երբեք պիտի չընդունիս :

Բայց դուն , չե՞ս ուզեր , մե՛ ղ կճամբորդուէի ,
երազել , ճակատդ ուսիս դրամ : Եկուր թաւա-
լուն տանը հանգարտ սեմէն տեսի՛ր անոնք որ
անցան եւ անոնք որ պիտի անցնին : բոլոր
մարդկային պատկերները , զոր մաքուր Ոգի մը
ինձի կը բերէ , պիտի ռդեւորուին քեզի համար ,
երբ մեր դրան առջեւ մեծ անձայն երկիրները
երկարօրէն տարածուին :

Պիտի քալենք այսպէս , մեր ստուերը միայն
թողլով այս ապերախտ երկրին վրայ ուրկից
մեռածներն անցան դացին . անոնց վրայ պիտի
խօսինք այն ժամուն ուր ամէն բան սեւ կ'ե-
րեւայ , եւ երբ դուն կ'ախորժիս անհետ ճամբէ՛
մը երկննալ , ու անստոյգ սստերուն կը թընամ՝
երազել , ողբալով , ինչպէ՞ս Արտեմիսն իր ազ-
բիւրներուն եզերքը , քու սէրդ լոկկ ու միշտ
վտանգուած :



Ձ Ի Թ Ե Ն Ե Մ Յ Լ Ե Ռ Ը

Ա.

Այն ատեն գիշեր էր եւ Յիսուս մինակ կը
քալէր , ճերմակ հագած ինչպէս մեռել մը պա-
տանքին մէջ : Աշակերտները կը քնանային
բլուրին ոտքը . ձիթենիներուն մէջտեղէն զոր
չարագոյժ հով մը կը կքէր , Յիսուս կը քալէր
մեծաքայլ՝ անոնց պէս սարսալով , մահուան
չափ տխուր , աչքերը մռայլ ու խաւարչտին ,
ճակատը վայրահակ , թեւերը պատմուճանին
վրայ ծալլած՝ ինչպէս գիշերային գող մը որ
գողցածը կը ծածկէ , հարթ շաւիղի մը չափ
լաւ ճանչնալով ժայռերը : Կանգ կ'առնէ Գեթ-
սեմանի կոչուած տեղ մը : Կը ծռի , ծուկի
կ'իյնայ , ճակատը հողին . յետոյ երկինք կը
նայի ու « Հա՛յր » կը կանչէ : — Բայց երկինքը
սեւ կը մնայ եւ Աստուած չի պատասխաներ :

Ոտքի կ'ելլէ դարմացած , կը քալէ նորէն
մեծաքայլ , քսուելով ձիթենիներուն որ կը
դողան : Պաղ ու դանդաղ , արիւնոտ քրտինք մը
կը հոսի ճակտէն : Ետ կը դառնայ , վար կ'իջնէ ,
սարսափով կ'աղաղակէ . « Ձէ՞ք կրնար աղօթել
եւ հսկել ինձի հետ » : Բայց մահահանդոյն քուն
մը կը ճնշէ առաքեալները : Պետրոսն ալ խու-
կը մնայ՝ միւսներուն պէս՝ տիրոջը ձայնին :
Մարգու Որդին այն ատեն համբօյէն վեր կ'ելլէ
կրկին . եզիպտացի հովիւի մը պէս , երկնքին մէջ
կը փնտռէ թէ աստղի մը խորը Հրեշտակը չի՞
չողար արդեօք : Բայց սգաւոր ամպ մը կը
տարածուի ինչպէս այրիի մը քօղք , եւ անոր
ծալքերն անապատը կը պաշարեն : Յիսուս , յի-
շելով այն բոլոր տառապանքը զոր կրած էր եւ
րեւուն տարիէ ի վեր , մարդ գարձաւ . եւ վախն
իր մահկանացու սիրտը սեղմեց անյաղթելի

գրկապնդուժով մը : Պաղ զգաց : Ի զուր դոչեց
 երեք անդամ . « Հա՛յր » : Հովը միայն պատաս-
 խանեց իր ձայնին : Աւաղին վրայ ինկաւ նստաւ
 եւ իր ցաւին մէջ՝ աշխարհի եւ մարդոց վրայ
 մարդկային մտածում մը ունեցաւ : — Եւ եր-
 կիրը գողաց, զգալով ծանրութիւնը Փրկչին որ
 Արարչին սոքը կ'իյնար .

Բ

Յիսուս կ'ըսէր . « Ո՛վ Հայր , թո՛ղ որ դեռ
 ապրիմ : Վերջին բառէն առաջ մի՛ փակեր
 գիրքս : Չե՞ս զգար աշխարհն ու բովանդակ
 մարդկային աղքը որ իմ մարմնոյս հետ կը տա-
 ուպի եւ քու ձեռքիդ մէջ կը դողգղայ : Որով-
 հետեւ երկիրը մինակ ու այրի մնալու վախը
 կ'ունենայ՝ երբ կը մեռնի այն որ նոր խօսք
 մը կ'ըսէ . եւ դուն անոր չորցած ծոցին մէջ
 երկնքին բառերէն մին միայն թողուցիր որ
 իյնայ՝ իմ բերնէս հոսելով : Բայց այդ բառն
 ա՛յնքան մաքուր է, եւ ա՛յնպէս քաղցր, որ կար-
 ծես թէ գինուլցուց մահկանացուներու տոճը՝
 կեանքի եւ աստուածութեան կաթիլով մը ,
 երբ թեւերս բանալով « Եղբայրութի՛ւն » ըսի :

« Ո՛հ Հա՛յր , եթէ կատարեցի իմ ցաւագին
 պաշտօնս, եթէ Աստուածը ծածկեցի իմաստունին
 գէմքին տակ , եթէ մարդկային զոհարերու-
 թեան գինը փոխեցի , մարմիններու նուիրու-
 մին տեղ հոգիներունն ընդունելով , ամենու-
 ղեք իրերուն տեղ խորհրդանշանը դնելով ,
 կոխին տեղ՝ խօսքը , գանձին տեղ՝ լուծան ,
 արիւնի կարմիր ալիքներուն տեղ՝ գինիին
 շառագոյն ալիքները , մտեղէն անդամներու տեղ՝
 ձերմակ բաղարջը . եթէ ժամանակը երկուքի
 բաժնեցի — մին սարուկ , եւ միւսն աղաս , —
 յանուն անցեալին զոր ես քաւեցի եւ յանուն
 արիւնին իմ սրտիս որ կը տառապի եւ մօտ է

մարելու , թափենք անոր կէսը՝ ապագան քա-
 ւելու համար : Հա՛յր , ազատարար , այսօր իսկ ,
 առաջուց , նետէ՛ այդ սիրոյ եւ անմեղութեան
 արիւնին կէսը՝ գլխուն վրայ անոնց որ պիտի գան
 եւ ըսեն . « Ամենուն ներելի է անմեղն սպաննել » :
 Գիտենք թէ դարերու հեռաւորութեան մէջ պի-
 տի ծնին դատան բռնակալներ, կեղծ իմաստուն-
 ներով շրջապատուած , որոնք իւրաքանչիւր ազ-
 գիմիաքը պիտի պղտորեն իմ փրկագործութեանս
 շինձու իմաստ մը տալով : — Աւա՛ղ , այժմ իսկ որ
 կը խօսիմ , արդէն իւրաքանչիւր խօսքս թոյնիկը
 փոխուի ամէն մէկ առակիս մէջ . հեռացո՛ւր ինձ-
 մէ՛ այս բաժակը՝ պիղծ եւ աւելի դառն քան մաղ-
 ձը եւ օշինդրը կամ ծովուն ջուրերը : Գաւա-
 դանները որ զիս պիտի ծեծեն , փուչէ պսակը ,
 ձեռքերուս բեւեռները , դեղարքը կուրծքիս
 խորը , վերջապէս ամբողջ խաչը որ կը կանդ-
 նի եւ ինձի կը սպառէ , ոչինչ ունին, ո՛վ Հայր,
 ոչինչ որ զիս այդքան զարհուրեցնէ : Երբ Աս-
 տուածները հաճին աշխարհներու վրայ խոյս-
 նալ , պէտք է որ հոն խորունկ հեռքեր միայն
 թողուն . եւ եթէ ես ոտք կոխեցի այս անկա-
 տար երկրագունտին վրայ , որուն անդադրում
 հեծեծանքը զիս կը կանչէր , հոն իմ տեղս երկու-
 հրեշտակ ձգելու համար էր , որոնք ոտքին հեռ-
 քերը պիտի համբուրէր մարդկութիւնը, — երջա-
 նիկ Ատուգութիւնը եւ անքոյթ Յօյսը — որ ար-
 քայութեան մէջ ժպտելով կը քալեն : Բայց
 պիտի բաժնուիմ այս աղքատ երկրէն , միմիայն
 վեր վերցուցած ըլլալով խեղճութեան այդ վեր-
 արկուն որ մեծ ծալքերով կը պատէ զայն , դժու-
 տեաիլ ու աղետաւոր ծածկոյթ , զոր մէկ ծայրէն
 կը բռնէ Տարակոյսը եւ միւս ծայրէն Չարիքը :

« Չարի՛ք եւ Տարակո՛յս : Մէկ բառով կրնամ
 գանոնք փոշի դարձնել : Ի՞նչն նախապուշակած

էիբ զանոնք, ճգէ՛ որ զանոնք թոյլատրած ըլլալու յանցանքիդ թողու-թիւնն ընդունիմ : Այս է ամբաստանութիւնը որ ամէն կողմէ կը ծանրանայ արարչութեան վրայ :— Իր ամայի գերեզմանին վրայ կանգնեցնենք Ղազարոսը . մեռելներու մեծ գաղտնիքն յայտնելու այլեւս ազան թող չըլլայ : Թո՛յլ տանք որ յիշէ ինչ որ տեսաւ, թող խօսի՛ :— Ինչ որ տեսական է եւ ինչ որ վախճանաւոր, ինչ որ Տէրը բնութեան սրտին մէջ գրաւ, ինչ որ բնութիւնը կ'առնէ ամէն մէկ արարածէ եւ ինչ որ կուտայ անոր . ինչ են իր համր խօսակցութիւններն երկնքին հետ, իր անպատում սէրն ու անարատ կապերը . ի՛նչպէս ամէն բան կը ջնջուի հոն եւ ամէն բան կը վերանորոգուի, ինչո՞ւ հոն կան բաներ որ ծածուկ կը մնան եւ կան որ կը յայտնուին : Թէ արդեօք երկնքի աստղերը ամենքն ալ փորձանքի ենթարկուած, այս երկրագունտին պէս նախ մեղաւոր կ'ըլլան ու յետոյ կը փրկուի՞ն, երկիրը անո՞նց համար դոյութիւն ունի թէ աւնոնք երկրին համար . ինչ որ առասպելն ունի ճշմարիտ եւ ինչ որ խորհուրդն ունի յստակ, ինչ որ գիտութիւնն ունի տգէտ եւ ինչ որ բանականութիւնն ունի թիւը, թէ ինչո՞ւ հողին կաշկանդուած է իր ողորմելի բանտին մէջ, թէ ինչո՞ւ ոչ մէկ շաւիղ չկայ երկու մեծ ուղիներուն միջեւ, հանգարտութեան ու խաղաղ բերկրանքներուն եւ տարտամ կելքերու անվախճան մոլեգնութեան միջեւ, ծանրաբուն թմրութեան ու ջղաձգութեան միջեւ, եւ թէ ինչո՞ւ մահը կը կախուի մոռլլ սուրի մը պէս, տխրեցնելով բնութիւնը՝ զոր ամէն վայրկեան կը հարուածէ, թէ արդարն ու զարին, թէ անարդարն ու չարը ճղճիմ արկածնե՞ր են ձակափաղարկան շրջանակի մը մէջ, թէ ոչ տիեզերքին երկու մեծ բեւեռներն են՝ իրենց լայն ուսե-

րուն վրայ կրելով երկինքն ու երկիրը, եւ թէ ինչո՞ւ Չարին ոգիները կը յաղթանակեն մանուկներու մահուան անարդար աղէտքին մէջ, եւ թէ Աղբերը աստուածային գաղափարներու ոսկի աստղերէն առաջնորդուած կինե՞ր են . թէ ոչ խենթ երախաներ գիշերուան մէջ անկանթեղ, խարխափող ու լալագին, եւ առանց ոչ մէկ առաջնորդի, եւ թէ երբ ժամանակին կուրնչական պահացոյցն իր աւաղի հատիկները մինչեւ վերջինը հոսած ըլլայ, քու աչքիդ մէկ նայուածքը քու ձայնիդ մէկ ազդակը, իմ սրտիս մէկ հառաչը, իմ խաչիս մէկ նշանը, պիտի կարենամ յեղունգը բանալ յաւերժական Յաւերուն, բռնադատել զանոնք իրենց մարդկային որսը թող տալու եւ թեւերնին ծալլելու, — ամէն բան յայտնուած պիտի ըլլայ երբ մարդը գիտնայ թէ ո՛ւր կից կուգայ եւ ո՛ւր պիտի երթայ : »

Գ.

Այսպէս կը խօսէր աստուածային Որդին աստուածային Հօրը : Երբէն կ'երկրպագէ, կը սպասէ, կը յուսայ : Բայց կրկին ոտքի կ'ելլէ եւ կ'ըսէ, «Թող քու կամքդ ըլլայ, եւ ոչ թէ իմս, եւ յաւերժան : » Խորունկ սարսափ մը, անհուն ու յաւերժան : » Խորունկ սարսափ մը եւ չարչարանքն ու յամր անձկութիւն մը իր չարչարանքն ու յամր ոգեւարը կը կրկնապատկեն : Երկայն ատեն կը նայի, երկայն ատեն կը փնտոէ՝ առանց տեսնելու : Ինչպէս սուղի մարմար մը, ամբողջ երկինքը սեւ էր, երկիրը, անլոյս, անասող ու անայգի, եւ զուրկ հոգեոյ լոյսէն՝ ինչպէս եւ զեռայժմ, կը դողար :— Անտառին մէջ ստնածայն մը լսեց, եւ տեսաւ Յուդային ջահը որ կը սլքտար :

ԼՌՈՒԹԻՒՆԸ

Եթէ ճշմարիտ է որ Ս. Գրքին նուիրական Պարտեզին մէջ Մարդու Որդին ըսած ըլլայ ինչ որ վերեւ յիշուեցաւ, եթէ համար, կոյր ու խուլ արարածներու ազդակին, երկինքը մեզ լքած

է՛ վրժած աշխարհի մը պէս , արդարը բացա-
կալութեան դէմ իր արհամարհանքը պիտի
կանգնէ , եւ ա՛լ պաղ լուութեամբ մը միայն
պիտի պատասխանէ Աստուածութեան յա իտե-
նական լուութեան :

Գ Ա Յ Լ Ի Ն Մ Ա Հ Ը

— 0 0 —

Բոցավառ լուսնին վրայէն ամպերը կը վա-
ղէին՝ ինչպէս մուխը կը փախչի հրդեհին վրա-
յէն , եւ անտառը սեւ էր մինչեւ հորիզոնը : Կը
քալէինք , անձայն , խոնաւ դալարիքին , թանձր
ցախերուն ու բարձր վառենիներուն մէջէն ,
երբ եղեւիններու տակ՝ նման Լանտիրներուն ,
նշմարեցինք մեծ եղունգի հետքերը զօր գե-
տինը թողած էին թափառիկ գաջլերը որոնց եւ
տեւէն էինք ինկած : Ականջ դրինք , շունչերնիս
բռնած եւ քայլերնիս առկախ : — Ոչ անտառը ,
ոչ դաշտը օդին մէջ հառաչ չէին արձակեր .
սգաւոր հողմացոյցը երկնքին մէջ կը ճչէր :

Որովհետեւ հովը հողէն շատ բարձր թռչե-
լով , մենաւոր աշտարակներուն միայն կը դըպ-
ցընէր իր հոտերը . եւ վարի կաղնիները , դէպ
ի ժայռերը ծոած , իրենց արմուկին վրայ
պառկած քնացած կը թուէին : Ոչինչ ուրեմն չէր
բզզար , երբ , գլուխը հակելով , հետախոյզ որ-
սորդներէն ամենէն ծերը գետինը պառկեցաւ
ու աւազը դննեց . քիչ յետոյ , ինքը որ երբեք
չէ սխալած , ցած ձայնով յայտարարեց թէ այդ
նոր փորուած հետքերն անցքը կը հաստատէին
երկու մեծ եղջերուագայլի եւ երկու գայլու
ձագի : Այն ատեն ամենքս դանակնիս պատ-
րաստեցինք , եւ ծածկելով մեր հրացաններն
ու անոնց շատ ճերմակ շողիւնը , քայլ առ քայլ

կը յառաջանայինք ոտտերը մէկիկ ընելով : Մենէ
երեքը կանգ առին , եւ ես , փնտաւելով ինչ որ
անոնք տեսեր էին , յանկարծ նշմարեցի երկու
աչք որ կը վառէին , եւ քիչ մը անդին տեսայ
չարս թեթեւ ստուերներ որ կը պարէին լուս-
նին տակ՝ ցախերուն մէջաեղը , ինչպէս ամէն
օր մեր աչքին առջեւ , զուարթ բարակները
կ'ընեն մեծ աղմուկով՝ երբ իրենց տէրը դառ-
նայ : Ձեռով անոնց կը նմանէին , ու պարերնին
ալ նման էր : Բայց Գայլին զաւակները լռիկ
կը խաղային , լաւ գիտնալով թէ երկու քայլ
անդին , իր պատերուն մէջ կէս-քուն պառկած է
մարդը՝ իրենց թշնամին : Հայրը ոտքի վրայ էր ,
եւ աւելի հեռուն , ծառի մը կը թնամ , իր էգը կը
հանգչէր , ինչպէս այն մարմարէ մատակ-գայլը
զոր Հոռվմայեցիք կը պաշտէին եւ որու մազոտ
փորը Հոեմոսն ու Հոմոուլոսը կը պահպանէր :


Գայլը եկաւ նստաւ , երկու սրունդները
ցից , կեռ եղունգները աւաղին մէջ խրած : Կորած
էր , քանի որ յանկարծակի ըրերնք զինքը , նա-
հանջն անհնար , բոլոր ճամբաները բռնուած :
Այն ատեն իր հրավառ կլապին մէջ առաւ ա-
մենէն խիզախ շունին գողգողուն վիզը , եւ իր
երկաթէ կզակն ա՛լ չբացաւ . հակառակ մեր
գնդակներուն որ իր մարմնոյն մէջէն կ'անց-
նէին եւ մեր սուր դանակներուն որ , արցան-
ներու պէս , իր լայն աղիքներուն մէջ իրարու
կը հանդիպէին , մինչեւ վերջին վայրկեանը՝ երբ
շունը , խեղդուած , իրմէ շատ առաջ մեռած , ա-
նոր ոտքերուն տակ թաւալեցաւ : Գայլն այն
ատեն թողուց զայն ու մեզի նայեցաւ : Գնահա-
կերն անոր կուշտը կը մնային մինչեւ երախա-
կալը , զայն իր արիւնտով ողողած դալարիքին
կը գամէին . մեր հրացանները չարաշուք մահի-
կի մը ձեւով կը պաշարէին զայն : Հեղ մըն ալ

մեզի նայեցաւ , յետոյ պառկեցաւ նորէն , բեր-
նին վրայ թափած արեւնը լղելով , եւ առանց
հաճելու գիտնալ թէ ի՞նչ կերպով կորաւ , աչ-
քերը դոցեց ու մտաւ առանց ճիշ մ'արձակելու :

Ճակատս դրի անվառօդ հրացանիս , ու
սկսայ մտմտալ : ա՛լ ձեռքս յառաջ չդնաց
որ մատակն ու ձաշերը հալածէի , որոնք երեքն
ալ ուղած էին անոր սպասել , եւ կարծեմ՝ եթէ
երկու կորիւնները չըլլային՝ գեղեցիկ ու մաշկ
այրին պիտի չթողուր որ ան մինակ կրէր միծ
գժբաղդութիւնը . բայց իր պարտքն էր ձագերն
ազատել , որպէսզի անոնց սորվեցնէր անօթու-
թեան աղէկ զիմանալ , երբեք չմտնել քաղաք-
ներու զաշինքին մէջ զոր մարդը կնքած է
սարկացած անասուններուն հետ , որոնք պառ-
կելու տեղ մը ունենալու համար , անոր առջեւն
ինկած կ'երթան որսալ անտառին ու ժայտին
առաջին տէրերը :

Աւա՛ղ , բախ մտքէս , հակառակ «Մարդ» մեծ
անունին , ի՞նչպէս կ'ամչնամ մենէ , ո՛րքան
ճղճիմ ենք մենք : Թէ ի՞նչպէս ձգելու է կեանքն
ու իր ցաւերը , զո՛ւք էք որ զիտէք , վսեմ ա-
նասուններ : Տեսնելէ յետոյ ինչ որ եղանք երկ-
րիս վրայ եւ ինչ որ կը թողունք , լուռ թիւնը
միայն մեծ է , մնացեալը բոլոր՝ տկարութիւն :

—Ա՛հ , քեզ լաւ հասկցայ , վայրենի ճամբորդ ,
եւ քու վերջին նայուածքդ մինչեւ սիրտս մը-
տաւ : «Եթէ կրնաս , կ'ըսէր ան , ջանա՛ աշնչափ
ատեն ուսանիլ ու խոկալ որ հողիդ համնի
ստոյիկեան խրոխտութեան մինչեւ այն վե-
րին աստիճանը ուր ես , անտառը ծնած , անմի-
ջապէս բարձրացայ : Հեծել , լալ , աղերսել , հա-
ւասարադէս վատութիւն է : Արիաբար կատա-
րէ՛ք ու երկայն ու ծանր գործդ այն ճամբուն
մէջ ուր բաղին ուղեց քեզ կանչել , յետոյ ինձի
պէս՝ տանապէ՛ ու մեռի՛ր անխօսուկ :»



«Ազգային գրադարան»

NL0303309

